

ԱՐՑԱՆՈՒՄ ՏԱՐԱԾՎԱԾ ՈՒՐՏԸ ՈՐՊԵՍ ԱՐԺԵՔԱԿՈՐ
ԵԹԵՐԱՅՈՒՂԱՅԻՆ ՀՈՒՄՔ

Ա.Է. Ավետիսյան

Ուրցը (Ուրց սողազող, Thymus serpyllum L.) Արցախում լայնորեն տարածված նթերայտադասի և դեղաբույս է։ Ուրցի նթերայտը օժտված է բազմաթիվ արժեքավոր հատկություններով, որի շնորհիվ լայնորեն օգտագործվում է բժշկության, դեղագործության, կոսմետիկայի և օժանդիկների արտադրության բնագավառներում։ Ներկա աշխատանքում կատարել ենք Արցախում աճող ուրցի նթերայտի քանակական և որոշ որակական տվյալների հետազոտում։

Ուրցը հանդիպում է ներք հիմնական տիպերի տեսքով, կախված նթերայտի առանձին բաղադրիչների առավելագույն պարունակությունից և դրան համապատասխան նթերայտը բաժանվում է ներք կոմերցիոն խմբերի. թիմոլային տիպ (պարունակում է գլխավորապես թիմոլ), կարվակրոլային տիպ (պարունակում է հիմնականում կարվակրոլ) և կիտրոնային տիպ (նթերայտը պարունակում է գիտրալ, լիմալոլ և գերանիոլ և ունի կիտրոնի հոտ վարդի նոտայով)։ Աշխարհում ուրցի նթերայտի հիմնական արտադրողներ են Իսպանիան, Մարոկոն, ԱՄՆ, Իրանիան և Չինաստանը։ Ուրցի նթերայտի գինը միջազգային շուկայում կազմում է 15մլ-ը 52\$ [7]։

Պատմական ակնարկ։ Ուրցը մարդկությանը հայտնի է շատ վաղ ժամանակներից։ Ավիզեննան բույսից ստացված նթերայտը, քսելու ձևով, օգտագործել է գլխացավերի, իսկ ամբողջ բույսը՝ բղկոցների, փսխման, ասթմայի, որդու մեղմության ձևով՝ բերանի խռուկի բորբոքումների և անգինայի ժամանակ։ Ամիրդովլաթը նշում է, որ դեղաբույսը առանձին կամ յուրի, գինու, մեղրի և այլ նյութերի հետ խառնած, քացում է օրգանների խցանումները, մեզը, հալում է ուռուցքները, գործություն տալիս ուղեղին, ստամոքսին, դադարեցնում փսխումը, թրստոտությունը, կնրակրի հետ ուտելով՝ օգնում է առամնագավին, ասթմային, ուժեղացնում տեսողությունը, կանոնավորում շնչառությունը։ Հիպոկրատը ուրցն օգտագործել է ակամա միզարձակության բուժման ժամանակ, Ռուֆոսն՝ առամնագավի։ Ըստ Մարտիրոս Սեբաստիացու, ուրցը պայծառեցնում է միտքը, ուժեղացնում է զգայությունը, կտրում է հազը, իսկ ըստ Լ. Գաբրիելյանի, այն օգնում է ականջի ցավին և մարտնչությանը, լերդացավին, մեղրաջրով օգտագործելուց՝ բուժում է քոսը, մաշկի քորը և դեղությունը։ Հայկական ժողովրդական բժշկության մեջ դեղաբույսի սպիրտային թորվածքը կիրառվել է սրտային և նյարդային եփանդությունների ժամանակ, նշվում է, որ այն՝ հակաքորթորիչ է, վերացնում է քերանի վատ հոտը և փորկապությունը։

Ուրցը լայնորեն օգտագործվում է ռուսական, ուկրաինական, բուլղարական, գերմանական, ֆրանսիական, ավստրիական, լեհական և այլ ժողովրդական բժշկության մեջ [1]։


Բույսի նկարագրությունը։ Ուրցը խոլեղիյնազգիների կամ շրթնաձողկավորների ընտանիքին պատկանող, 10-30 սմ բարձրությամբ, գետնի վրա փռված, խիստ ճյուղավոր, հիմքում փայտացող ցողունով կիսաթուփ է։ Ունի ձվաձև տերևներ։ Մտղաբույլները հիմնականում գտնվում են ճյուղերի ծայրերին։ Բույսը ծաղկում է մայիսից մինչև աշուն, իսկ պտուղները հասունանում են օգոստոս-սեպտեմբեր ամիսներին։ Ամբողջ բույսն ունի սուր, համելի, բուրավետ հոտ։ Բազմաճյուղ է սերմերով և վեցնետառիվ ձեղանկով։ Պտղակալում է կանոնավոր, վատ է տանում ջուրը։

Ուրցի հայկական տարածումներն են դաշտուրց, թյում, խոտ, խուտ, դրի դազը, վայրեղ ծղորեն, մեջ [1]։


Բույսի տարածվածությունը։ Ուրցը տարածված է Կովկասում, Ուկրաինայում, Եվրոպայում, Հյուսիսային Ամերիկայում, Սիբիրում, Միջին Ասիայում և այլուր։ Ուրցը շատ տարածված է նաև Արցախում։ Այն հանդիպում է մեր հանրապետության լեռնային և նախալեռնային շրջաններում՝ քարքարոտ, արևադարձային, բլուրների վրա, տափաստանային և ալպյան մարգագետիններում, դաշտերում և այլուր, հաճախ առաջացնելով հոծ ճմուռներ։ Նրա օգտակար հատկությունները վաղուց հայտնի են տեղի բնակչությանը, որի շնորհիվ այն լայնորեն

օգտագործվում է ժողովրդական բժշկության մեջ: Ուրցը օգտագործում են նաև բուրավետ թելերի և օշարակների պատրաստման համար:


Եթերայուղի քիմիական կազմը: Ամբողջ բույսը պարունակում է 0,5-1% եթերայուղ: Ուրցի եթերայուղի հիմնական բաղադրիչներից են թիմոլը (մոտ 30%) և կարվակրոլը (15-20%), որոնք օժտված են ուժեղ հակամեխիչ հատկություններով: Հակաբիոտիկների և մնացած սինթետիկ հականեխիչների հայտնաբերումից առաջ, ուրցի եթերայուղի բաղադրիչ կարվակրոլը համարվում էր ամենաուժեղ հակամանրէային պրեպարատը: Եթերայուղերում թիմոլը և կարվակրոլը ուղեկցվում են աբրա-ցինենի և γ -տերպինենի մեծ քանակությամբ: Ուրցերի որոշ տարատեսակներ եթերայուղի բաղադրության մեջ պարունակում են լինալոլ, գերանիոլ, գերանիլացետատ, ցիտրալ, ինչպես նաև α -տերպինոլ, α -տերպինիլացետատ, 1,8-ցիննոլ, բորնեոլ, ցինգիբերնոլ, ցինոլ, տերպինենը և այլն[7]:




թիմոլ



կարվակրոլ



γ -տերպինենոլ



գերանիոլ



Եթերայուղի կիրառումը: Ուրցից ստացվող եթերայուղը համարվում է որպես հանգստացնող և խթանող միջոց: Այն արդյունավետ միջոց է վերին շնչառական ուղիների և թոքերի բորբոքային աղոցքաների՝ աստմայի, պալարալստի, գրիպի և այլ ցրտառական հիվանդությունների ժամանակ: Եթերայուղը խթանում է մաքսադուրյան աղոցքաները, վերացնում ստամոքսաղիքային սրակոտի սպազմերը և քաջանում զագագոյացումը: Լինելով հակաանեխիչ, օգնում է վերքերի, կտրվածքների, այրվածքների, դժվար ապաքինվող վերքերի բուժման ժամանակ: Ուժեղացնում է իմունային պաշտպանության մեխանիզմը: Բարձրացնում է զարկերակային ցածր ճնշումը: Ամրացնում է սպզմերը և եղունգները: Այն օգտագործում են նյութափոխանակության խանգարման, անքնության, սակավաբյուրության ժամանակ:

Եթերայուղը օգտագործվում է հրուշակեղենի և պահածոների արդյունաբերության մեջ, ինչպես նաև պարֆյումերիայում:

Ուրցից ստացվող թիմոլը ուժեղ հականեխիչ միջոց է: Այն նշանակվում է ողողման ձևով՝ բերանի խոռոչի և քկանցքի ախտահարումների ժամանակ: Մոտամտողիական պրակտիկայում թիմոլը համարվում է որպես դեմոնից ցավազրկող միջոց և մտնում է այս նպատակով կիրառող Գարամանի հեղուկի բաղադրության մեջ: Մաշկային հիվանդությունների պրակտիկայում թիմոլը կիրառվում է սնկային ախտահարումների, էկզեմայի, բազմաթիվ այլ դերմատիտների ժամանակ [1,7]:

Փոփոխական մաս: Եթերայուղի քանակական պարունակության որոշումը: Ուրցի եթերայուղը ստանում են ծաղկած բույսի վերգետնյա մասից: Ուրցի թաքսը հումքում՝ ծաղկած

կանաչ զանգվածում, եթերայտի քանակական պարունակությունը որոշել ենք Գինգբորգի նդանակով [2]: Ուսումնասիրել ենք նմուշներ Արցախի տարբեր շրջաններից: Եթերայտի քանակական պարունակությունը կազմել է ~ 0.4 մլ/գ %:

Եթերայտի որոշ որակական տվյալների հետազոտում: Ջրային գոլորշիներով թորման նդանակով [3,4] ստացել ենք ուրցի եթերայտի որոշակի քանակություն և այն օգտագործել նրա որոշ որակական տվյալների բացահայտման համար: Ուսումնասիրումը կատարել ենք համապատասխան մեթոդիկաների համաձայն [5]:

Հետազոտման արդյունքում պարզվել է, որ եթերայտում ունի սառեցնող և դառր համ: Նրան բնորոշ է ուրցի թափանցող հոտը, որը պայմանավորված է եթերայտում թիմոլի ներկայությամբ: Ուրցի եթերայտը սենյակային ջերմաստիճանում բաց դնդնալու թափանցիկ հեղուկ է, որը երկար պահելուց մգանում է և դառնում ոսկեդեղին:

Եթերայտի թափանցիկությունը պահպանվում է մինչև $+11^{\circ}\text{C}$ ջերմաստիճանը: $+11^{\circ}\text{C}$ ջերմաստիճանում եթերայտը սկսվում է պոտրվել և դառնալ ոչ թափանցիկ: Ավելի ցածր ջերմաստիճաններում (-15°C -ից -22°C) ի հայտ են գալիս սպիտակ մոմանման փաթիլներ: Դա բացատրվում է եթերայտում թիմոլի մեծ քանակությունների (ավելի քան 40%) առկայությամբ: Հնդ որում բացահայտվել է, որ եթերայտը ցածր ջերմաստիճանների ազդեցությանը ենթարկելիս, եթերայտի պոտորման ջերմաստիճանը $+11^{\circ}\text{C}$ -ից իջնում է մինչև $+5^{\circ}\text{C}$, որը բացատրվում է հալմանբար նրանում տեղի ունեցող քիմիական բաղադրության անդառնալի փոփոխություններով:

Ուրցի եթերայտի խտությունը որոշել ենք 0,001 ճշտությամբ, պիկնոմետրով, 20°C ջերմաստիճանում, համապատասխան մեթոդիկայի համաձայն [6]: Այն կազմել է 0.928 գ/սմ³:

Եթերայտի լավորակության բացահայտման համար նմուշը ափանդական մեթոդիկայով [5] ենթարկել ենք հետազոտման ըստ սպիրտի, ինչպես նաև ճարպային և հանքային յուղերի խառնուկների առկայության: Ուսումնասիրման արդյունքում պարզվել է, որ ուրցի եթերայտում սպիրտի և ճարպային ու հանքային յուղերի խառնուկներ չեն պարունակվում:

Շնր հոգմից Արցախի տարածքում ուրցի (Ուրց սողազող, *Thymus serpyllum* L.) տարածվածության և նրանում եթերայտի քանակական ու որակական պարունակության ուսումնասիրումը գույց է տալիս արտադրական մասշտաբներով բույսի օգտագործելու հնարավորությունը:

Резюме

Чабрец обыкновенный, широко распространенный в Арцахе, эфирномасличное их лекарственное растение. Эфирное масло чабреца обыкновенного обладает многими лечевными и другими свойствами. Оно широко используется в медицине, фармацевтической, косметической, парфюмерной промышленности.

В данной работе исследовали количественное содержание и некоторые качественные показатели эфирного масла, полученного из наземной части чабреца обыкновенного, произрастающего на территории Арцаха.

Գրականություն

1. Թորայան Ա. Հայաստանի դեղաբույսերը, 1983, էջ 267-272.
2. Государственная фармакопея СССР. X, 1968, с.816-817.
3. Ամիրխանյան Ա. Ե. Եթերայտների ստացումը ջրային գոլորշիներով թորման նդանակով, ԱրՊՀ գիտական տեղեկագիր, 2008, 1(17), էջ 47-50
4. Сидоров И. И., Туршьева Н. А., Фалеева Л. П., Ясюкевич Е. И. Технология натуральных эфирных масел и синтетических душистых веществ. М. Легкая и пищевая пром-сть, 1984, 368с.
5. Государственная фармакопея СССР. X, 1968, с.481-483.
6. Государственная фармакопея СССР. X, 1968, с.772.
7. Internet sites: http://www.newt.h1.ru/Katalog_L/kat-0015.htm; http://www.medicina.kharkov.ua;http://www.regions_city.ru/gorod/adler/articles/144592.html
<http://womanprice.ru/s/z1.pl?neways..139=1>